ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2016 թվականի մարտի 17-ին

"ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. "Ավելացված արժեքի հարկի մասին" Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3.1-ին հոդվածի 3-րդ կետի "գ" ենթակետը "ավտոմեքենաներ" բառից հետո լրացնել ", բացառությամբ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ավտոմեքենաների" բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի "դ" ենթակետի երկրորդ պարբերությունից հանել "կամ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ավտոմեքենաների մասով" բառերը:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

26 մարտի 2016 թվականի
ՀՕ-31-Ն